

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



MF2351 ՅԴՄ ՍԱՐՔԻ ՄԻԱՑՈՒՄԸ
ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ WIFİ-VPN (PPTP)

Նոր սերնդի MF2351 մակնիշի ՅՂՄ սարքերը հնարավոր է միացնել ՊԵԿ-ի և ԱՌԿԱ-ի կողմից հաստատված պաշտպանված ցանցին օգտագործելով WiFi-VPN հնարավորությունը: VPN կապի հաստատումից հետո ՅՂՄ սարքը կստանա ՊԵԿ-ի և ԱՌԿԱ-ի կողմից հաստատված պաշտպանված ցանցի IP հասցե և կարող է աշխատել անվտանգ տիրույթում:

VPN կապի հաստատման ժամանակ պետք է սահմանված լինեն հետևյալ DNS սերվերները՝

10.200.100.50

10.200.100.51

WiFi-VPN (PPTP) կապի կարգաբերման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

1. ՅՂՄ-ի միացման ժամանակ «**Կարգավորումների ծրագիր**» պատուհանում հետ հաշվարկի ժամանակ սեղմեք **F1** կոճակը: Արդյունքում բացվում է «**Կարգավորումների վահանակ**» պատուհանը:
2. Պատուհանում ընտրեք «**1-Ցանց**» մենյուն: Արդյունքում բացվում է «**Ցանց**» պատուհանը:
3. Պատուհանի ներքևի ընտրովի դաշտում (combo box) ընտրեք «**6-VPN by WiFi**» կարգաբերումը: Սպասեք մինչև կհայտնվի «**Միացումը չհայողվեց**» հաղորդագրությունը: Սեղմեք «**ok**» կոճակը:
4. Այնուհետև ընտրեք «**1-WiFi**» մենյուն:
5. Բացված պատուհանում գտեք և կարգաբերեք Ձեր WiFi ցանցը: Կարգաբերման ընթացքում օգտագործվում է Windows համակարգի ստանդարտ գործիքը: Կարգաբերումից հետո փակեք պատուհանը սեղմելով «**ok**» կոճակը: Արդյունքում վերադառնում եք «**Ցանց**» պատուհան:
6. Ընտրեք «**4-VPN**» մենյուն:
7. Մուտքագրեք VPN սերվերի տվյալները (կարող եք օգտագործել **F4** կոճակը բացելու համար Էկրանի վրայի ստեղնաշարը):
8. Սեղմեք «**Հաստատել**» կոճակը:
9. Նորից պատուհանի ներքևի ընտրովի դաշտում (combo box) ընտրեք «**6-VPN by WiFi**» կարգաբերումը: Սպասեք մինչև կհայտնվի «**Միացումը հայողվեց**» հաղորդագրությունը: Սեղմեք «**ok**» կոճակը: Եթե չհաջողվեց, նորից կրկնեք 4-րդ քայլից սկսած:
10. Դուրս եկեք պատուհանից սեղմելով «**ՐԵՏ**» կոճակը:
11. Այա դուրս եկեք «**Կարգավորումների վահանակ**» պատուհանից սեղմելով «**Սերժել**» կոճակը ՅՂՄ ստեղնաշարի վրա:

Արդյունքում՝ սարքը կարող է օգտագործել WiFi ցանցը միանալու համար նույն ցանցում գտնվող առևտրային ծրագրին, ինչպես նաև կկապնվի ՊԵԿ-ի և ԱՌԿԱ-ի կողմից հաստատված պաշտպանված VPN ցանցին:

Առևտրային ծրագրի հետ կապը կազմակերպելու համար տես «**Հսկիչ - դրամարկղային մեքենայի ինտեգրումը արտաքին (առեվտրային) ծրագրերի հետ**» ձեռնարկը: